ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2015 թվականի թիվ 48 - Ա

ՀԵՆՐԻԿ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. 2015 թվականի մարտի 17-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Արճիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Հենրիկ Մուսայելյանի հետ 12.12.2011թ. կնքած աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը Հենրիկ Մուսայելյանին 2015 թվականի մարտի 17-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Արճիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. մարտի 17
ք.Իջևան